ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018

02.2018

03.2018

04.2018

05.2018

06.2018

07.2018
Հուլիս

08.2018

09.2018

10.2018

11.2018

12.2018

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Հուլիս

թիվ 7 (239)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Կարեն Յարալյան» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության, «Ալեքս Հոլդինգ», «Կրպակ», «ՍԱՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ների արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՊԱՐ-ԱՐՏ», «ՀՈՓԵԼ ՑԵՆՏՐԱԼ», «ՈՍԿԵ ԿԱՐ» ՍՊԸ-ներին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐ-ՈՒՍ», «ԷՄԹԻ ՏՐԱՆՍՖԵՐ» ՓԲԸ-ներին վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիա տրամադրելու, «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն գրանցելու և լիցենզավորելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 116-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 68-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 117-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 118-Ն որոշումը «Բանկերի կողմից օրենքով սահմանված գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման» կարգը հաստատելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 119-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 120-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

35 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կարեն Յարալյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 109Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ (որոշում թիվ 110Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա և մասնաճյուղի լիցենզիա է տրամադրվել*** «ՊԱՐ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 114Ա):
- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (որոշում թիվ 123Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՀՈՓԵԼ ՑԵՆՏՐԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 124Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կրպակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 125Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՈՍԿԵ ԿԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 127Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՍԱՍ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 128Ա):
- ***Վճարահաշվարկային կազմակերպության*** (վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու) ***լիցենզիա է տրամադրվել*** «ԱՐ-ՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 129Ա):
- ***Վճարահաշվարկային կազմակերպության*** (դրամական (փողային) փոխանցումների իրականացման) ***լիցենզիա է տրամադրվել*** «ԷՄԹԻ ՏՐԱՆՍՖԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 130Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/486Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 68-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից երաշխիքային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ և 24-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի ««Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի, հատուցման ենթակա գումարի և բանկային ավանդների առավելագույն տոկոսադրույքների վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի, հատուցման ենթակա գումարի և բանկային ավանդների առավելագույն տոկոսադրույքների վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կարգի 2.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.4. Այն դեպքում, երբ որևէ արտարժույթով արտահայտված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների որևէ ժամանակային խմբի (խմբերի) առավելագույն տոկոսադրույքը գերազանցում է համապատասխան արտարժույթի համապատասխան ժամանակային խմբի համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը, ապա բանկի կողմից հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար կատարվող պարբերական երաշխիքային վճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Բանաձև N 9

$$\text{Եվ} = \frac{\text{Ամե1}}{100} \times 0.05 + \frac{\text{Ամե2}}{100} \times 0.06 + \frac{\text{Ամե3}}{100} \times 0.075 + \frac{\text{Ամե4}}{100} \times 0.1 + \frac{\text{Ամե5}}{100} \times 0.15$$

(9), որտեղ՝

Եվ - եռամսյակի համար վճարվող պարբերական վճարն է,

Ամե1-ը, Ամե2-ը, Ամե3-ը, Ամե4-ը և Ամե5-ը եռամսյակի ընթացքում բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշներն են, որոնք հաշվարկվում են եռամսյակի յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ բանկի հաշվեկշռում փաստացի հաշվառված բանկային ավանդների մնացորդների հանրագումարը բաժանելով տվյալ ժամանակահատվածի օրերի քանակի վրա: Ընդ որում՝

Ամե1-ի հաշվարկին մասնակցում են ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից ներգրավված Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և այն ժամանակային խմբում (խմբերում) ընդգրկված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից ներգրավված արտարժութային բանկային ավանդները, որտեղ ներառվող ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների առավելագույն տոկոսադրույքը չի գերազանցում տվյալ ժամանակային խմբի (խմբերի) համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. հուլիսի 20-ին (ՀՀՊՏ N21 (624), 01.08.2018):

Ամե2-ի հաշվարկին մասնակցում են այն ժամանակային խմբում (խմբերում) ընդգրկված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից, ներգրավված արտարժութային բանկային ավանդները, որտեղ ներառվող ֆիզիկական անձանցից, այդ թվում անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների առավելագույն տոկոսադրույքը գերազանցում է տվյալ ժամանակային խմբի (խմբերի) համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը ոչ ավելի, քան 5%-ով:

Ամե3-ի հաշվարկին մասնակցում են այն ժամանակային խմբում (խմբերում) ընդգրկված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից ներգրավված արտարժութային բանկային ավանդները, որտեղ ներառվող ֆիզիկական անձանցից, այդ թվում անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների առավելագույն տոկոսադրույքը գերազանցում է տվյալ ժամանակային խմբի (խմբերի) համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը 5%-ից 15%-ով (ներառյալ):

Ամե4-ի հաշվարկին մասնակցում են այն ժամանակային խմբում (խմբերում) ընդգրկված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից, ներգրավված արտարժութային բանկային ավանդները, որտեղ ներառվող ֆիզիկական անձանցից, այդ թվում անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների առավելագույն տոկոսադրույքը գերազանցում է տվյալ ժամանակային խմբի (խմբերի) համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը 15%-ից 25%-ով (ներառյալ):

Ամե5-ի հաշվարկին մասնակցում են այն ժամանակային խմբում (խմբերում) ընդգրկված ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից, ներգրավված արտարժութային բանկային ավանդները, որտեղ ներառվող ֆիզիկական անձանցից, այդ թվում անհատ ձեռնարկատերերից իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցների առավելագույն տոկոսադրույքը գերազանցում է տվյալ ժամանակային խմբի (խմբերի) համար Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված միջին առավելագույն տոկոսադրույքը 25%-ից ավելի:

Ֆիզիկական անձանցից, այդ թվում անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցները ներառում են նաև բանկի կողմից 2016 թվականի հունիսի 1-ից հետո ներգրավված բանկային ավանդների վրա կատարված ավելացումները (համալրումները):

2) Կարգը 2.4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.5-րդ կետով.

«2.5. Սույն կարգի իմաստով ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված միջոցներ են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն բանկային ավանդի և բանկային հաշվի պայմանագրով և անվանական արժեթղթերի միջոցով արտարժույթով ներգրավված միջոցները:»:

3) Կարգը 3.2.12-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2.13-րդ կետով.

«3.2.13. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկն իրականացվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ սահմանված «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման կարգի» Հավելված 2-ի:»:

4) Կարգի 3.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.3. Աղյուսակ 3-ում ներկայացվում է ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների բաշխումը ըստ ավանդների տեսակների՝ հազար դրամներով: Ընդ որում՝ աղյուսակի «Բանկի կողմից թողարկված արժեթղթեր» և «Տարանցիկ հաշիվներ» սյունակներում լրացվում են տվյալներ բանկի՝ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ ունեցած այն պարտավորությունների գումարները, որոնք հաշվառվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» (այսուհետև՝ Հաշվային պլան)՝ համապատասխանաբար «Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր, առևտրային և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ և պարտավորություններ», «Տարանցիկ հաշիվներ» և «Կրեդիտորական պարտքեր» բաժիններում: «Բանկային հաշիվներ», «Ավանդներ» և «Այլ պարտավորություններ» սյունակներում լրացվում են տվյալներ բանկի՝

ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) նկատմամբ ունեցած այն պարտավորությունները, որոնք հաշվառվում են Հաշվային պլանի «Թղթակցային և բանկային հաշիվներ», «Պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ» և «Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունների գծով» բաժիններում: «Այլ» սյունակում լրացվում են բանկի՝ ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ ունեցած բոլոր այն պարտավորությունները, որոնք հաշվառվում են Հաշվային պլանի այլ բաժիններում (ենթաբաժիններում), և որոնք համապատասխանում են Օրենքում տրված բանկային ավանդի սահմանմանը: Այն օրերին, երբ բանկի հաշվեկշիռը փոփոխություններ չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները: Արտարժութային ավանդները ներկայացվում են եռամսյակի տվյալ օրվա համար Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքներով: Աղյուսակի «Ամսաթիվ» տողերում ներկայացվում են հաշվետու եռամսյակի օրերի ամսաթվերը հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի: Աղյուսակ 3-ի «Ընդամենը» սյունակում լրացված գումարները ըստ «եռամսյակի օրերը» տողերի պետք է հավասար լինեն Աղյուսակ 1-ի համապատասխան օրվա տողին: Օրինակ՝ Աղյուսակ 3-ի «Ընդամենը» սյունակի «եռամսյակի առաջին օրը» տողի վանդակը պետք է համապատասխանի Աղյուսակ 1-ի «Ընդամենը» սյունակի «եռամսյակի առաջին օրը» տողին, իսկ Աղյուսակ 3-ի «եռամսյակի վերջին օրը»՝ Աղյուսակ 1-ի համապատասխան վանդակին:»:

5) Կարգի 3.4-րդ կետում.

ա. Առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ 4-ում ներկայացվում են բանկերի կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից արտարժույթով ներգրավված և (կամ) երկարաձգված (վերանայված) միջոցների առավելագույն տոկոսադրույքները և ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից ներգրավված բանկային ավանդների միջին օրական ցուցանիշը՝ ըստ առանձին արժույթների և ժամանակային խմբերի:»,

բ. Երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններ.

«Աղյուսակում արտարժույթով ներգրավված միջոցների արժույթը լրացվում է համաձայն ԻՍՕ 4217 կոդերի:

«Ժամկետայնությունը» սյունակում լրացվում է արտարժույթով ներգրավված միջոցների ժամկետայնությունը՝ ըստ հետևյալ տարբերակների.

1) «Ցպահանջ, անժամկետ և մինչև 30 օր»,
2) «31-ից 60 օր»,
3) «61-ից 90 օր»,
4) «91-ից 120 օր»,
5) «121-ից 150 օր»,
6) «151-ից 180 օր»,
7) «181 օրից 1 տարի»,
8) «1-ից 2 տարի»,
9) «2-ից 3 տարի»,
10) «3-ից 4 տարի»,
11) «4-ից 5 տարի»,
12) «5-ից 7 տարի»,
13) «7-ից 10 տարի»,
14) «10-ից 12 տարի»,
15) «12-ից 15 տարի»,
16) «15 տարուց ավելի»:

«Բանկային ավանդի միջին օրական ցուցանիշ» սյունակում ներկայացվում են հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշները:»:

6) Կարգի 3.5-րդ կետում.

ա. «երկրորդ ամսվա վերջին աշխատանքային օրը» բառերը փոխարինել «30 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

բ. «ներգրավված բանկային ավանդների» բառերը փոխարինել «արտարժույթով ներգրավված միջոցների» բառով:

7) Կարգի Գլուխ 4-ը ուժը կորցրած ճանաչել:

8) Կարգի Հավելված 1-ում Աղյուսակ 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
25 հուլիսի 2018 թ., N 116-Ն

Հավելված 1

Հաստատված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 116-Ն որոշմամբ

«Աղյուսակ 4

Արժույթի ISO կոդ	ժամկետայնություն	Առավելագույն տոկոսադրույք	Բանկային ավանդի միջին օրական ցուցանիշ

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի կողմից վարվող ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգում ներառվող տեղեկությունները համապատասխանեցնել իրավական ակտերում իրականացված փոփոխություններին, ինչպես նաև հստակեցնել երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկը,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի ««Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման կարգը» հաստատելու մասին» թիվ 261-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ հաստատված «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման վերաբերյալ» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման կարգը» ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):»:

2) Կարգի վերնագրից հանել «ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» բառը:

3) Կարգի 3.1 կետով սահմանված Աղյուսակ 1-ում.

ա. «2. Ավանդատուի տվյալներ» աղյուսակի «Սոցիալական ապահովության քարտ» 10-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Սոցիալական ապահովության քարտ	Լրացվում է ավանդատուի սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, որը ենթակա է պարտադիր լրացման նոր բացվող բոլոր բանկային հաշիվների համար	օժանդակ

»,

բ. «3. Բանկի նկատմամբ ավանդատուի պահանջներ[4»] աղյուսակում.

բ1. «Սկզբնական գումար» 11-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Սկզբնական գումար	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի սկզբնական (մայր) գումարը՝ առանց դրա վրա հավելագրված տոկոսների: Բանկի կողմից թողարկված անվանական արժեթղթերը լրացվում են իրենց անվանական արժեքներով: Համատեղ ավանդի դեպքում լրացվում է ավանդի ընդհանուր գումարը, այլ ոչ թե տվյալ ավանդատուի մասնաբաժինը	պարտադիր

»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. հուլիսի 20-ին (ՀՀՊՏ N21 (624), 01.08.2018):

բ2. «Մնացորդ» 14-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Մնացորդ	Լրացվում է ավանդատուի յուրաքանչյուր պահանջի մնացորդը հաշվետու օրվա դրությամբ: Համատեղ ավանդի դեպքում լրացվում է ավանդատուի մասնաբաժնի մնացորդը հաշվետու օրվա դրությամբ: Բանկի կողմից թողարկված անվանական արժեթղթերը լրացվում են իրենց անվանական արժեքներով:	

»,

գ. «4. Բանկի նկատմամբ ավանդատուի խնդրահարույց պարտավորություններ» աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«

Միացման ամսաթիվ	Լրացվում է բանկին՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու ամսաթիվը	օժանդակ
Միացող բանկի կոդը	Լրացվում է միացող բանկի հնգանիշ կոդը	օժանդակ

»,

դ. «5. Երաշխավորված ավանդ» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ավանդատուին հատուցման ենթակա գումարի չափը, այդ թվում՝	Լրացվում է տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի չափը ՀՀ դրամով՝ հաշվարկված ըստ սույն կարգի հավելված 2-ի: Չի լրացվում այն ավանդների համար, որոնք երաշխավորված ավանդ չեն համարվում: Բանկերի միացման դեպքում լրացվում է միացող յուրաքանչյուր բանկի համար առանձին հաշվարկված հատուցման ենթակա գումարների հանրագումարը՝ համաձայն սույն Կարգի հավելված 2-ի	օժանդակ
Տոկոսագումար	Լրացվում է հատուցման ենթակա գումարի և Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված ավանդների գումարի դրական տարբերությունը: Բացասական տարբերության դեպքում չի լրացվում: Բանկերի միացման դեպքում լրացվում է միացող յուրաքանչյուր բանկի համար առանձին հաշվարկված վերոնշյալ մեծությունների հանրագումարը:	օժանդակ

»,

ե. «6. Ամփոփ» աղյուսակից հետո հանել «[1]Հօգուտ երրորդ անձի ներդրված ավանդների դեպքում նշվում են ավանդը ներդնողի տվյալները՝ մինչև երրորդ անձի՝ ավանդը տնօրինելու իրավունքն ուժի մեջ մտնելու պահը, այնուհետև, որպես ավանդատու հանդես է գալիս երրորդ անձը, և ավանդատուի վերաբերյալ տեղեկատվության մեջ նշվում են վերջինիս տվյալները:» նախադասությունը:»:

4) Կարգը 3.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3 կետով.

«3.3. Հօգուտ երրորդ անձանց ներդրված ավանդների դեպքում երրորդ անձանց համար ևս լրացվում են սույն կարգի 3.1-րդ կետով սահմանված Աղյուսակ 1-ի 2-րդ կետով պահանջվող տվյալները: Հօգուտ երրորդ անձի ներդրված ավանդների դեպքում ավանդը ներդնողի տվյալները նշվում են մինչև երրորդ անձի՝ ավանդը տնօրինելու իրավունքն ուժի մեջ մտնելու պահը, այնուհետև, որպես ավանդատու հանդես է գալիս երրորդ անձը:»:

5) Կարգի Հավելված 1-ում.

ա. «ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԵՍԱԿԸ» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Փաստաթղթի կոդը	Անձը հաստատող փաստաթղթի անվանումը
AND	Անձնագիր
ID	Նույնականացման քարտ
ZIG	Զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար
VK	Վերադարձի վկայական՝ միայն ՀՀ վերադառնալու համար

NGN	ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական
CVK	Ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան երեխաների համար
PCP	Կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ՝ փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար
PVK	Ապաստան հայցողի անձը հաստատող վկայական
OTA	Օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր
AHP	Ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված)
KVK	Մշտական կացության քարտ
JKVK	Ժամանակավոր կացության քարտ
HHA	Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր
JPP	Ժամանակավոր պաշտպանված անձի՝ անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական)

»,

բ. հանել «ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԿՈՏԱՅՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ՍՅՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ՏԱՎՈՒՇ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ» աղյուսակները:

գ. «ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ» աղյուսակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«ՀՀ բնակավայրերի կոդերը լրացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1209-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Վարչատարածքային բաժանման միավորների»» դասակարգչի:»:

6) Կարգի Հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ

Հավելված 2

1. Արտարժութային բանկային ավանդները և խնդրահարույց պարտավորությունները վեր են ածվում դրամային համարժեքի՝ հիմք ընդունելով հաշվետու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:

2. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային բանկային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային բանկային ավանդները: Ընդ որում՝

1) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված բանկային ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է 10 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ 10 միլիոն ՀՀ դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

2) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված բանկային ավանդների գումարը: Եթե ստացված գումարը փոքր է 5 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկի մեջ ընդգրկվում են նաև Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված դրամական միջոցները՝ 5 միլիոն ՀՀ դրամի և առաջին հերթին հաշվարկված գումարի տարբերությունը չգերազանցող չափով:

3) Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը 5 միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը՝ մինչև 10 միլիոն ՀՀ դրամով:

Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը պակաս է 5 միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ 5 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում է երաշխավորված ավանդի դրամային մասը՝ սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն: Ապա հաշվարկվում է երաշխավորված ավանդի արտարժութային մասը՝ սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

3. Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա երաշխավորված ավանդը հաշվարկվում է ավանդատուի բանկային ավանդի և բանկի նկատմամբ ունեցած խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա:

4. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և միևնույն ժամանակ բանկի նկատմամբ ունի դրամային և արտարժութային խնդրահարույց պարտավորություններ, ընդ որում՝ դրամային բանկային ավանդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և դրամային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) հաշվարկվում է արտարժութային բանկային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հաշվարկների դրական արդյունքների դեպքում, երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն,

4) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հաշվարկներից մեկի բացասական արդյունքի դեպքում հաշվարկվում է վերը նշված երկու տարբերությունների հանրագումարը,

5) սույն կետի 4-րդ ենթակետում ստացված արդյունքի դրական լինելու դեպքում հաշվարկվում է երաշխավորված ավանդը: Ընդ որում՝ եթե ստացված դրական տարբերությունը դրամային է, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի, հակառակ դեպքում՝ համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի,

6) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական, իսկ 2-րդ ենթակետի հաշվարկի զրո լինելու դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, իսկ 1-ին ենթակետի հաշվարկի զրո լինելու, իսկ 2-րդ ենթակետի հաշվարկի դրական լինելու դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

5. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և միևնույն ժամանակ դրամային և արտարժութային խնդրահարույց պարտավորություններ, ընդ որում՝ դրամային բանկային ավանդը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և դրամային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական լինելու դեպքում հաշվարկվում է արտարժութային բանկային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

3) սույն կետի 2-րդ ենթակետի հաշվարկի բացասական լինելու դեպքում հաշվարկվում է սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հաշվարկման արդյունքում ստացված գումարների հանրագումարը,

4) սույն կետի 3-րդ ենթակետում ստացված արդյունքի դրական լինելու դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

6. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային խնդրահարույց պարտավորություններ, ընդ որում՝ դրամային բանկային ավանդը չի

գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և դրամային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական արդյունքի դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն,

3) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի բացասական արդյունքի դեպքում հաշվարկվում է 1-ին ենթակետում հաշվարկված գումարի և արտարժութային բանկային ավանդի գումարը: Ստացված գումարի դրական լինելու դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն,

4) Սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի զրո լինելու դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

7. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային խնդրահարույց պարտավորություն, ընդ որում՝ դրամային բանկային ավանդը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և դրամային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական արդյունքի դեպքում երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

8. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային (արտարժութային) բանկային ավանդ և դրամային (արտարժութային) խնդրահարույց պարտավորություն և միաժամանակ ունի արտարժութային (դրամային) խնդրահարույց պարտավորություն, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է դրամային (արտարժութային) բանկային ավանդի և դրամային (արտարժութային) խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական արդյունքի դեպքում 1-ին ենթակետի հաշվարկից ստացված գումարից նվազեցվում է նաև արտարժութային (դրամային) խնդրահարույց պարտավորությունը: Դրական արդյունքի դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

9. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի արտարժութային բանկային ավանդ և արտարժութային խնդրահարույց պարտավորություն և միաժամանակ ունի դրամային խնդրահարույց պարտավորություն, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է արտարժութային բանկային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական արդյունքի դեպքում 1-ին ենթակետի հաշվարկից ստացված գումարից նվազեցվում է նաև դրամային խնդրահարույց պարտավորությունը: Դրական արդյունքի դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն Հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

10. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և միևնույն ժամանակ արտարժութային խնդրահարույց պարտավորություն, ընդ որում՝ դրամային բանկային ավանդը գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է արտարժութային բանկային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի բացասական լինելու դեպքում, երաշխավորված բանկային ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և սույն կետի 1-ին ենթակետում ստացված գումարի հանրագումարի չափով: Ստացված գումարի դրական լինելու դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի,

3) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի զրո լինելու դեպքում, հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի:

11. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և միևնույն ժամանակ արտարժութային խնդրահարույց պարտավորություն, ընդ որում դրամային բանկային ավանդը չի գերազանցում 5 մլն դրամը, ապա երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) հաշվարկվում է արտարժութային բանկային ավանդի և արտարժութային խնդրահարույց պարտավորության տարբերությունը,

2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի դրական լինելու դեպքում, երաշխավորման ենթակա գումարի հատուցվող մասը հաշվարկվում է սույն հավելվածի 2 րդ կետի 3-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն,

3) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի բացասական լինելու դեպքում, երաշխավորման ենթակա գումարի հատուցվող մասը հաշվարկվում է դրամային բանկային ավանդի և սույն կետի 1-ին ենթակետում ստացված գումարի հանրագումարի չափով: Դրական արդյունքի դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն,

4) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի զրո լինելու դեպքում, երաշխավորման ենթակա գումարի հատուցվող մասը հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

12. Եթե անվճարունակ բանկում ավանդատուի ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միաձուլու դեպքում, ապա բանկը տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկը կատարելիս յուրաքանչյուր միացող բանկում տվյալ ավանդատուին պատկանող բոլոր բանկային ավանդները դիտում է որպես առանձին բանկային ավանդ: Ընդ որում՝ միացման արդյունքում ձևավորված ժամկետային ավանդների գծով բանկը երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկում է առանձին՝ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ցպահանջ կամ ժամկետային ավանդից բացի ավանդի ժամկետի վերաբերյալ այլ պայմանով ավանդների գծով՝ միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից մեկ տարվա ընթացքում: Սահմանված մեկ տարին կամ ավանդի պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու պահից այդ ավանդները դիտվում են որպես մեկ ավանդ, և բանկում միևնույն ավանդատուին պատկանող բոլոր ավանդների գծով հաշվարկվող երաշխավորված ավանդի հատուցման գումարը հաշվարկվում է սույն կարգի Հավելված 2-ի 1-11-րդ կետերի համաձայն:

13. Եթե ավանդատուն միացող բանկերից մեկում ունի միայն խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա ավանդի հաշվարկի ժամանակ խնդրահարույց պարտավորությունը նվազեցվում է միացող մյուս բանկի (բանկերի) բանկային ավանդից: Ընդ որում՝ խնդրահարույց պարտավորությունը նվազեցվում է միացող բանկում ավանդատուի՝ խնդրահարույց պարտավորության արժույթով բանկային ավանդից: Ավանդատուի՝ խնդրահարույց պարտավորության արժույթով բանկային ավանդ չունենալու դեպքում խնդրահարույց պարտավորությունը նվազեցվում է ավանդատուի՝ այլ արժույթով բանկային ավանդից (ավանդներից):

14. Եթե ավանդատուն միացող բանկերից մեկում ունի և՛ բանկային ավանդ, և՛ խնդրահարույց պարտավորություն, և խնդրահարույց պարտավորությունը գերազանցում է բանկային ավանդին, խնդրահարույց պարտավորության՝ բանկային ավանդը գերազանցող մասը նվազեցվում է միացող մյուս բանկում (բանկերում) ավանդատուի ունեցած բանկային ավանդից (առկայության դեպքում): Ընդ որում՝ խնդրահարույց պարտավորության՝ բանկային ավանդը գերազանցող մասը նվազեցվում է միացող անկում ավանդատուի՝ խնդրահարույց պարտավորության արժույթով բանկային ավանդից: Ավանդատուի՝ խնդրահարույց պարտավորության արժույթով բանկային ավանդ չունենալու դեպքում խնդրահարույց պարտավորությունը նվազեցվում է ավանդատուի՝ այլ արժույթով բանկային ավանդից (ավանդներից):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
25 հուլիսի 2018 թ., N 117-Ն

*«Բանկերի կողմից օրենքով սահմանված գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման» կարգը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով կարգավորել բանկերի կողմից գործառնությունների պատվիրակման հարաբերությունները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի կողմից օրենքով սահմանված գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման» կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
25 հուլիսի 2018 թ., N 118-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 118-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է բանկերի կողմից գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման կարգը, պայմանները, ժամկետները և համաձայնության տրամադրման մերժման հիմքերը:

2. Սույն կետում թվարկված գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնության տրամադրումը բանկին իրականացվում է սույն կարգի 3-8-րդ կետերի համաձայն.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. հուլիսի 20-ին (ՀՀՊՏ N21 (624), 01.08.2018):

1) Ավանդների ընդունում, այդ թվում՝ սպասարկում,
2) Վարկերի տրամադրում ու վարկերի մոնիթորինգ (այդ թվում՝ սպասարկում),
3) Ֆինանսական վարձակալության (լիզինգի) իրականացում,
4) Դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) իրականացում,
5) Ներդրումային գործառնություններ,
6) Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում,
7) Բանկային երաշխիքների տրամադրում, ակրեդիտիվներով հաշվարկների բացում կամ իրականացում, բաժանորդագրական գործունեության իրականացում,
8) Արտարժույթի առք և վաճառք, փոխանակում,
9) Ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվության մատուցում,
10) Պարտքի հավաքագրմանն ուղղված գործառնությունների իրականացում,
11) Հաշվապահական հաշվառման, ներքին աուդիտի իրականացման, ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառնություններ,
12) Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի, այն է՝ ներդրված սարքավորումների, ծրագրային ապահովումների, ներքին և արտաքին ցանցի և այդ տեխնոլոգիաների հետ աշխատող մարդկանց և գործընթացների ամբողջությունը, որը նախատեսված է բանկի գործունեությանն անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, մշակման, փոխանցման և պահպանման համար, տեխնիկական և ծրագրային սպասարկման հետ կապված գործառնություններ:

3. Բանկը սույն կարգի 2-րդ կետով սահմանված գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնությունը ստանալու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում.
1) Դիմում՝ համաձայն Հավելված 1-ի,
2) Տեղեկատվություն կոնտրագենտի վերաբերյալ՝ համաձայն Հավելված 2-ի, ընդ որում՝ այն չի ներկայացվում, եթե կոնտրագենտը Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպություն է,
3) Պատվիրակման պայմանագրի նախագիծը,
4) Հիմնավորում պատվիրակման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև վերլուծություն պատվիրակումից բխող ռիսկերի և դրանց հնարավոր նվազեցման վերաբերյալ,
5) Բանկի՝ պատվիրակման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերը, բացառությամբ այն դեպքի, երբ նշված իրավական ակտերը նախկինում ներկայացվել են Կենտրոնական բանկ և հետագայում դրանցում փոփոխություններ կամ լրացումներ չեն արվել,
6) Բանկի՝ պատվիրակված գործառնությունների հետ կապված արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը,
7) Կոնտրագենտի՝ պատվիրակման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերը՝ առկայության պարագայում,
8) Հիմնավորում պատվիրակվող գործառնությունը կոնտրագենտի կողմից իրականացնելու հնարավորության (կարողության) վերաբերյալ, մասնավորապես՝ արդյո՞ք կոնտրագենտն ունի բավարար մարդկային, տեխնիկական և այլ ռեսուրսներ պատվիրակվող գործառնությունը պատվիրակող բանկից ավելի որակյալ, օրենսդրության պահանջներին և, առկայության պարագայում, միջազգային ստանդարտներին համապատասխան իրականացնելու համար,
9) Կոնտրագենտի կողմից մշակված ծրագիր, որում նկարագրված են պատվիրակված գործառնությունների գծով ծառայությունների մատուցման անհնարինության դեպքում վերջինիս գործողությունները:

4. Կենտրոնական բանկը սույն կարգով պահանջվող տեղեկությունների պարզաբանման և (կամ) մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ:

5. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնությունը ստանալու համար պետք է բավարարվեն հետևյալ պայմանները.

1) Ներկայացրած հիմնավորումը պետք է հստակ ցույց տա, որ պատվիրակման արդյունքում էականորեն կբարձրանա բանկի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, կնվազի տվյալ գործառնության գծով բանկի ծախսատարությունը, կբարձրանա մատուցվող ծառայության որակը,

2) Պատվիրակման պայմանագրի նախագիծը պետք է հստակ նկարագրի կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները, ինչպես նաև պարունակի դրույթներ հետևյալի վերաբերյալ՝

ա. պատվիրակված գործառույթի իրականացման մասով բանկի կողմից կոնտրագենտի նկատմամբ պարբերական մոնիտորինգ իրականացնելու իրավասություն,

բ. բանկի կողմից կոնտրագենտի համար արտաքին աուդիտ հրավիրելու իրավասություն, ինչպես նաև Կենտրոնական բանկի պահանջով բանկի կողմից կոնտրագենտի համար արտաքին աուդիտ հրավիրելու իրավասություն,

գ. ծառայությունների պատվիրակման դադարեցման ժամանակ կողմերի գործողությունների նկարագրություն՝ ուղղված գործառնության անընդհատության ապահովմանը,

դ. վեճերի լուծման կարգը, մասնավորապես՝ արդյո՞ք ծառայություններ մատուցող անձը շարունակում է մատուցել ծառայությունները վեճերի քննման և որոշման կայացման ընթացքում,

ե. գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պաշտպանության պահանջ կոնտրագենտի համար,

զ. Կենտրոնական բանկի կողմից կոնտրագենտի նկատմամբ պատվիրակված գործառնության մասով վերահսկողության, ստուգման, վերստուգման, ուսումնասիրությունների իրականացման հնարավորության վերաբերյալ նշում:

3) Բանկի՝ արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը պետք է նկարագրի արտակարգ իրավիճակներում բանկի գործողությունները, այդ թվում՝ պատվիրակված գործառնությունների գծով ծառայությունների մատուցման անհնարինության դեպքում բանկի գործողությունները, պատասխանատու մարմինները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատվիրակված գործառնությունները բանկին վերադարձնելու հետ կապված հարաբերություններն ու ընթացակարգը, գործառնության անընդհատության ապահովմանն ուղղված գործողությունները:

4) Բանկի՝ պատվիրակման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերը պետք է պարունակեն դրույթներ ծառայություն մատուցող կազմակերպության ընտրության և գործառնության պատվիրակումից բխող հնարավոր ռիսկերի կառավարման մեթոդների վերաբերյալ:

6. Կենտրոնական բանկը սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնություն տալու կամ նախնական համաձայնության տրամադրումը մերժելու մասին: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ ստանալու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել ոչ ավելի, քան 30 օրով՝ այդ մասին տեղեկացնելով բանկին: Ժամկետի կասեցման դեպքում փաստաթղթերի քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

7. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում նախնական համաձայնության տրամադրումը չմերժելու կամ այդ ժամկետի կասեցման մասին բանկին չտեղեկացնելու դեպքում 30-օրյա ժամկետի ավարտի հաջորդ օրվանից նախնական համաձայնությունը համարվում է տրված:

8. Կենտրոնական բանկը կարող է մերժել սույն կարգի 2-րդ կետով նախատեսված գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնության տրամադրումը, եթե.

1) Ներկայացված փաստաթղթերը թերի կամ կեղծ են, փաստաթղթերում առկա են անարժանահավատ տեղեկություններ,

2) Պատվիրակվող գործառնությունը կարող է իրականացվել միայն լիցենզիայի կամ հատուկ այլ թույլտվության առկայության պարագայում, իսկ կոնտրագենտը այդ լիցենզիան կամ հատուկ թույլտվությունը չունի,

3) Գործառնության պատվիրակումը վտանգում կամ կարող է վտանգել բանկի, բանկի հաճախորդների, այլ պարտատերերի շահերը կամ ֆինանսական համակարգի կայունությունը,

4) Գործառնության պատվիրակումը կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը,

5) Գործառնության պատվիրակումը կարող է առաջացնել համակարգային ռիսկ՝ կապված պատվիրակվող գործառնությունը մեկ կամ մի քանի անձանց մոտ կենտրոնացման հետ,

6) Գործառնության պատվիրակման արդյունքում կարող է սահմանափակվել ֆինանսական շուկայում ազատ մրցակցությունը,

7) Բավարարված չեն սույն կարգի 5-րդ կետով սահմանված պայմանները:

9. Այն դեպքում, եթե բանկը ստացել է նախնական համաձայնությունը գործառնության պատվիրակման համար, բանկը պարտավորվում է սույն կարգի 3-րդ կետով սահմանված տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին փոփոխությունը տեղի ունենալուց 10 օրվա ընթացքում: Ընդ որում՝ Կենտրոնական բանկը կարող է պահանջել փոփոխել կամ լուծել կոնտրագենտի հետ կնքված պայմանագիրը, եթե ներկայացված փոփոխության արդյունքում առաջացել են սույն կարգի 8-րդ կետով սահմանված մերժման հիմքերը:

10. Սույն կարգի 2-րդ կետում չներառված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործառնությունների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատման ծառայության պատվիրակման համար Կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնության տրամադրումն իրականացվում է սույն կարգի 11-14-րդ կետերին համաձայն:

11. Բանկը սույն կարգի 10-րդ կետով սահմանված գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնությունը ստանալու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) Դիմում՝ համաձայն Հավելված 1-ի,
2) Պատվիրակման պայմանագրի նախագիծը,
3) Տեղեկատվություն՝ համաձայն Հավելված 3-ի:

12.Սույն կարգի 11-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո Կենտրոնական բանկը 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնություն տալու կամ նախնական համաձայնության տրամադրումը մերժելու մասին: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ և (կամ) պարզաբանումներ ստանալու նպատակով 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել ոչ ավելի, քան 30 օրով՝ այդ մասին տեղեկացնելով բանկին: Ժամկետի կասեցման դեպքում փաստաթղթերի քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

13. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում նախնական համաձայնության տրամադրումը չմերժելու կամ այդ ժամկետի կասեցման մասին բանկին չտեղեկացնելու դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող օրվանից նախնական համաձայնությունը համարվում է տրված:

14. Կենտրոնական բանկը կարող է մերժել սույն կարգի 10-րդ կետով նախատեսված գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնության տրամադրումը, եթե.

1) Ներկայացված փաստաթղթերը թերի կամ կեղծ են, փաստաթղթերում առկա են անարժանահավատ տեղեկություններ,
2) Պատվիրակման պայմանագիրը հստակ չի նկարագրում կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության շրջանակները,
3) Պատվիրակվող գործառնությունը կարող է իրականացվել միայն լիցենզիայի կամ հատուկ այլ թույլտվության առկայության պարագայում, իսկ կոնտրագենտը այդ լիցենզիան կամ հատուկ թույլտվությունը չունի,
4) Պատվիրակման արդյունքում էականորեն չի բարձրանա բանկի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, չի նվազի տվյալ գործառնության գծով բանկի ծախսատարությունը, չի բարձրանա մատուցվող ծառայության որակը,
5) Գործառնության պատվիրակումը վտանգում կամ կարող է վտանգել բանկի, բանկի հաճախորդների, այլ պարտատերերի շահերը կամ ֆինանսական համակարգի կայունությունը,
6) Գործառնության պատվիրակումը կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը,
7) Գործառնության պատվիրակումը կարող է առաջացնել համակարգային ռիսկ՝ կապված պատվիրակվող գործառնությունը մեկ կամ մի քանի անձանց մոտ կենտրոնացման հետ,
8) Գործառնության պատվիրակման արդյունքում կարող է սահմանափակվել ֆինանսական շուկայում ազատ մրցակցությունը:

15. Այն դեպքում, եթե բանկը ստացել է նախնական համաձայնությունը գործառնության պատվիրակման համար, բանկը պարտավորվում է սույն կարգի 11-րդ կետերով սահմանված տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին փոփոխությունը տեղի ունենալուց 10 օրվա ընթացքում: Ընդ որում՝ Կենտրոնական բանկը կարող է պահանջել փոփոխել կամ լուծել կոնտրագենտի հետ կնքված պայմանագիրը, եթե ներկայացված փոփոխության արդյունքում առաջացել են սույն կարգի 14-րդ կետով սահմանված մերժման հիմքերը:

16. Բանկի կողմից պատվիրակված գործառնությունների նկատմամբ շարունակում են կիրառվել տվյալ գործառնության համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները:

17. Բանկի կողմից սույն կարգում թվարկված, պատվիրակված գործառնությունները չեն կարող կոնտրագենտի կողմից պատվիրակվել երրորդ անձի (ենթապատվիրակում), բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 12-րդ ենթակետերով սահմանված գործառնությունների, որոնց ենթապատվիրակման նկատմամբ պահանջները սահմանվում են Կենտրոնական բանկի համապատասխան իրավական ակտերով:

18. Սույն կարգով նախատեսված, բանկի կողմից պատվիրակված, ինչպես նաև սույն կարգում չթվարկված, 3-րդ անձի կողմից բանկին մատուցվող, բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ գործառնությունների վերաբերյալ բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվետվություն՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն

որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի:

19. Բանկը գործառնություններ պատվիրակելիս պատվիրակման պայմանագիրն ուժի մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ այդ ծառայությունից (գործառնությունից) օգտվող, գործող պայմանագրեր ունեցող սպառողներին տեղեկացնում է այդ մասին նրանց կողմից ընտրված հաղորդակցման եղանակով՝ նշելով կոնտրագենտի տվյալները:

20. Պատվիրակված գործառնության հետ կապված նոր հարաբերություններ հաստատելիս բանկը սպառողին բանավոր տեղեկացնում է, որ նրան հետաքրքրող ծառայությունը պատվիրակված է կոնտրագենտին և տրամադրում է կոնտրագենտի վերաբերյալ տվյալներ (տեղեկատվական թերթիկ, պայմանագրի մեջ նշում և այլն):

21. Բանկը, կոնտրագենտի յուրաքանչյուր փոփոխության դեպքում, գործող պայմանագիր ունեցող սպառողին առնվազն 10 օր առաջ տեղեկացնում է այդ մասին՝ սպառողի կողմից ընտրված հաղորդակցման եղանակով:

22. Բանկը սպառողին մատուցվող ծառայությունը կոնտրագենտին պատվիրակելու դեպքում չպետք է կիրառի տույժ կամ տուգանք կամ սպառողի վիճակը վատթարացնող որևէ գործողություն, եթե սպառողը չի ցանկանում շարունակել բանկի հետ կնքված պայմանագիրը կոնտրագենտի միջոցով սպասարկվելու պայմանի դեպքում:

23. Սույն կարգի 19-22-րդ կետերը կիրառվում են միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված, սպառողին առնչվող գործառնությունների պատվիրակման դեպքում:

24. Մինչև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերի ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերով պատվիրակված գործառնությունների նկատմամբ կիրառելի չէ սույն կարգի 19-րդ կետը, ինչպես նաև տվյալ գործառնությունների պատվիրակման նախնական համաձայնություն ստանալու համար բանկը սույն կարգի 3-րդ կամ 11-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացնելիս պատվիրակման պայմանագրի նախագծի փոխարեն ներկայացնում է կնքված պայմանագիրը:

25. Բանկի՝ մինչև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերի ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրով գործառնության պատվիրակման համար Կենտրոնական բանկի կողմից սույն կարգով սահմանված նախնական համաձայնության տրամադրումը մերժելու դեպքում այդ պայմանագիրը դադարում է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 118-Ն որոշման Հավելվածի

ԴԻՄՈՒՄ

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(բանկի լրիվ անվանումը)

տրամադրել նախնական համաձայնություն _____
(գործառնության(ների) անվանումը)

_____ պատվիրակելու համար:
(կոնտրագենտի անվանումը, գրանցման հասցեն, ՀՎՀՀ)

Իրավասու անձ `

_____
/բանկի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը/

____ _____ 20____ թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 118-Ն որոշման Հավելվածի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏՐԱԳԵՆՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավաբանական անձի տվյալները

1.1. Անվանումը _____

1.2. Գրանցման հասցեն _____

1.3. Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____
(օր/ամիս/տարի)

2. Տեղեկություններ իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահ) վերաբերյալ

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը	Պաշտոնը

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը	Գրանցման (բնակության) հասցեն	Փոխկապակցվածության տեսակը

8. Տեղեկություններ իրավաբանական անձի մասնակիցների վերաբերյալ

Մասնակիցների անվանումը/ անունը, ազգանունը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 118-Ն որոշման Հավելվածի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանկի լրիվ անվանումը _____
Գործառնության տեսակը _____
Կոնտրագենտի տվյալները Անվանումը _____ Գրանցման հասցեն _____ Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____ *(օր/ամիս/տարի)*
Բանկի և կոնտրագենտի միջև փոխկապակցվածության առկայություն ☐ Այո ☐ Ոչ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով պարբերաբար ստանալ բանկերի կողմից պատվիրակված, ինչպես նաև բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ, երրորդ անձի կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետի աղյուսակը լրացնել նոր 34-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

34	Հաշվետվություն պատվիրակված կամ 3-րդ անձի կողմից բանկին մատուցվող, բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ գործառնության(ների) վերաբերյալ	38	տարեկան

»,

2) Կանոնակարգը 33.3 կետից հետո լրացնել նոր 33.4 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33.4. Թիվ 38 հաշվետվությամբ ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված պայմանագրերով «Բանկերի կողմից օրենքով սահմանված գործառնությունների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման» կարգում թվարկված գործառնությունների պատվիրակման, ինչպես նաև բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ գործառնությունների՝ 3-րդ անձի կողմից բանկին մատուցման վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվության 3-5-րդ սյունակներում ներկայացվում է տեղեկատվություն կոնտրագենտի վերաբերյալ, 6-րդ սյունակում նշվում է բանկի կոնտրագենտի միջև փոխկապվածության մասին՝ լրացնելով «այո» կամ «ոչ»:»:

3) Կանոնակարգի Հավելված 2-ը լրացնել նոր 28 թիվ 38 հաշվետվությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
25 հուլիսի 2018 թ., N 119-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. հուլիսի 20-ին (ՀՀՊՏ N21 (624), 01.08.2018):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 119-Ն որոշմամբ

Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի
թիվ 50-Ն որոշման

Հաշվետվություն

3-րդ անձի կողմից բանկին մատուցվող, բանկի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ գործառնության(ների) վերաբերյալ

Չև թիվ 38
տարեկան

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ.*

Հ/Հ	Գործառնության տեսակը	Տեղեկատվություն կոնտրագենտի վերաբերյալ			Բանկի և կոնտրագենտի միջև փոխկապակցվածության առկայություն	Պայմանագրի կնքման ամսաթիվը	Պայմանագրի գործողության ժամկետը
		Անվանումը	Գրանցման հասցեն	ՀՎՀՀ			
1	2	3	4	5	6	8	9

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովագրական միջնորդների գործունեության նկատմամբ սահմանված պահանջները համապատասխանեցնելու Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից սահմանված սկզբունքներին,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասը, 90-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ մասերը, 97-րդ հոդվածի 2-րդ մասը, 103-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 172-րդ կետից հանել «տվյալ» բառը:
2) Կանոնակարգի գլուխ 35-ում.
ա. Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՉՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ»,***
բ. 228-րդ կետում «10 հազար Հայաստանի Հանրապետության դրամ» և «500 հազար Հայաստանի Հանրապետության դրամ» բառերը փոխարինել համապատասխանաբար «մինչև 10 հազար Հայաստանի Հանրապետության դրամը ներառյալ» և «մինչև 500 հազար Հայաստանի Հանրապետության դրամը ներառյալ» բառերով:
3) Կանոնակարգը գլուխ 35-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 35.1 և 35.2 գլուխներով.

«ԳԼՈՒԽ 35.1. ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

228.1. Ապահովագրական գործակալը պարտավոր է իրականացնել հաշվետու ժամանակաշրջանում առնվազն 12 ապահովագրության պայմանագրի կնքման գծով ապահովագրական միջնորդային գործունեություն կամ ապահովագրության պայմանագրի (պայմանագրերի) կնքման գծով ապահովագրական միջնորդային գործունեություն, որոնցով նախատեսված ապահովագրավճարը կազմում է առնվազն մեկ միլիոն (1 000 000) Հայաստանի Հանրապետության դրամ գումար: Ընդ որում, մինչև 2018 թվականի սեպտեմբերի 1-ը ներառյալ հաշվառված ապահովագրական գործակալների համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում 2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը և դրան հաջորդող յուրաքանչյուր հաշվետու տարին: 2018 թվականի սեպտեմբերի 1-ից հետո հաշվառված ապահովագրական գործակալների համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում 2020 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը և դրան հաջորդող յուրաքանչյուր հաշվետու տարին:

228.2. Ապահովագրական գործակալի պատասխանատու անձը մասնագիտական գիտելիքի ստուգման նպատակով Կենտրոնական բանկի կողմից կարող է հրավիրվել հարցազրույցի, որի արդյունքները կարող են հիմք հանդիսանալ գործակալին չհաշվառելու կամ ապահովագրական գործակալների ռեգիստրից հանելու համար:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. հուլիսի 20-ին (ՀՀՊՏ N21 (624), 01.08.2018):

228.3. Ապահովագրական գործակալի պատասխանատու անձը հաշվառումից հետո յուրաքանչյուր տարվա համար պարտավոր է մասնակցել ապահովագրական ընկերությունում կամ մասնագիտացված կառույցում կազմակերպվող մասնագիտական դասընթացի:

228.4. Ապահովագրական գործակալին «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 106-րդ հոդվածի համաձայն գործակալների ռեգիստրից հանելու դեպքում (բացառությամբ 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում) ապահովագրական ընկերությունները տվյալ գործակալին հաշվառելու համար կարող են դիմել Կենտրոնական բանկ հաշվառումից հանելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց 3 տարի հետո:

228.5. Ապահովագրական գործակալի պատասխանատու անձը, ապահովագրական գործակալի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձը չեն կարող ապահովագրական ընկերության հետ գտնվել աշխատանքային իրավահարաբերությունների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում աշխատանքների կատարման հարաբերությունների մեջ:

228.6. Ապահովագրական գործակալ չհամարվող ապահովագրական ընկերության աշխատակիցը, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում աշխատանքների կատարման հարաբերությունների մեջ գտնվող անձը, որն իրականացնում է ապահովագրության պայմանագրերի կնքում, պարտավոր է տիրապետել սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված թեմաների ցանկին: Սույն կետում նշված անձանց վրա տարածվում են նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, ինչպես նաև սույն կանոնակարգի 228.3-րդ կետով սահմանված պահանջը:

228.7. Ապահովագրական գործակալը պարտավոր է պահպանել սույն կանոնակարգի Հավելված 40-ով սահմանված գործարար վարվելակերպի կանոնները:

ԳԼՈՒԽ 35.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

228.8. Անձը ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի գործառույթ իրականացնելու համար պետք է բավարարի սույն կետով նախատեսված աղյուսակում նշված մասնագիտական համապատասխանության չափանիշներին՝

Ապահովագրական բրոքերի գործառույթ իրականացնող ֆիզիկական անձ	
ոչ կյանքի ապահովագրության գծով	միջնակարգ կրթություն և առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ ապահովագրության ոլորտում
կյանքի ապահովագրության գծով	բարձրագույն կրթություն և առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ապահովագրության ոլորտում
Ապահովագրական գործակալի գործառույթ իրականացնող ֆիզիկական անձ (իրավաբանական անձ գործակալի աշխատակից) և անհատ ձեռնարկատեր	
ոչ կյանքի ապահովագրության գծով	միջնակարգ կրթություն
կյանքի ապահովագրության գծով	բարձրագույն կրթություն

»:

4) Կանոնակարգի 229-րդ կետի.

ա. 1-ին ենթակետի «գ» պարբերությունում «դրությամբ,» բառից հետո լրացնել «այդ թվում՝ գործարար վարվելակերպի, բողոքների կարգավորման, շահերի բախման, հաճախորդների գումարների պահպանման, խարդախության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ կանոնակարգերը» բառերը,

բ. 3-րդ ենթակետում «բավարարող» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետությունում» բառերը,

գ. 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետ.

«4) ապահովագրական բրոքերի հետ աշխատանքային կամ այլ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվությունը:»:

5) Կանոնակարգի 241-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ ենթակետեր.

«4) ապահովագրական բրոքերային կազմակերպության մասնակիցների փոփոխության մասին տեղեկատվությունը, եթե մասնակիցների փոփոխությունը ներկայացված չէ կանոնադրության փոփոխությամբ,

5) ապահովագրական բրոքերի հետ աշխատանքային կամ այլ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց կազմում կատարված փոփոխությունները:»:

6) Կանոնակարգի գլուխ 39-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 39. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

243. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու (կամ ռեգիստրում փոփոխություն կատարելու) համար ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) անձի անունից Կենտրոնական բանկ է ներկայացնում

1) ապահովագրական գործակալի հաշվառման վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 11-ի և գործակալի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 12-ի,
2) ապահովագրական ընկերության հետ կնքած գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը,
3) ապահովագրական ընկերության կողմից՝ համաձայն Հավելված 40-ի գործակալին տրամադրված և գործակալի կողմից ստորագրված գործակալի գործարար վարվելակերպի կանոնները ներառող փաստաթղթի պատճենը,
4) սույն կանոնակարգի 225-րդ կետով սահմանված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար կնքված պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը, եթե ապահովագրական ընկերությունը չի ստանձնում գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումը,
5) ապահովագրական ընկերության կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգերը, որոնցով առնվազն սահմանված են ապահովագրական գործակալի պատասխանատու անձանց գիտելիքների ստուգման, նրանց մասնագիտական որակի բարձրացման մեխանիզմները, ներառյալ տեղեկություններ այն անձանց վերաբերյալ, որոնց կողմից կազմակերպված դասընթացների և/կամ քննությունների վրա են հիմնվում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալների պատասխանատու անձանց գիտելիքների ստուգումը (նման դասընթացներ կամ քննություններ կազմակերպվելու դեպքում), ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի տրամադրման, հաշվառման վկայականում փոփոխությունների կատարման և ապահովագրական գործակալի հետ պայմանագրի դադարեցման դեպքում հաշվառման վկայականի վերադարձման գործընթացները: Ընդ որում, սույն կետով սահմանված կանոնակարգերը ապահովագրական գործակալի հաշվառման ժամանակ չեն ներկայացվում, եթե դրանք նախկինում արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ:

244. Սույն կանոնակարգի 243-րդ կետում նշված ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրում պետք է առնվազն նշված լինեն՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված այն գործառնությունները, որոնք թույլատրված են գործակալին և ապահովագրության համապատասխան դասերը, որոնց գծով իրականացվելու են այդ գործառնությունները,
2) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնությունները գործակալին թույլատրված լինելու դեպքում՝ գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ ապահովագրական ընկերության կողմից թույլատրված չափերը,
3) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը ստանձնելու դեպքում՝ դրույթ սույն կանոնակարգով սահմանված չափերով ու պայմաններով համապատասխան պատասխանատվությունը ստանձնելու մասին,
4) միջնորդավճարի չափը, վճարման պայմանները, միջնորդավճարի վճարման օրը,
5) ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գործակալի իրավունքներն ու պարտականությունները,
6) ապահովագրական ընկերությանը տրամադրվող փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը:

245. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 243-րդ կետով սահմանված միջնորդագիրն ստանալու պահից՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում ապահովագրական գոր-

ծակալին ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու, հաշվառումը մերժելու կամ ապահովագրական գործակալների ռեգիստրում փոփոխություն կատարելու մասին: Ապահովագրական գործակալին ռեգիստրում հաշվառելու որոշման մեջ նշվում է գործակալի հաշվառման համարը:

246. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի կողմից հաշվառման վկայականի տրամադրումն իրականացվում է ապահովագրական ընկերության միջոցով, որը պարտավոր է ապահովագրական գործակալին հաշվառելու մասին Կենտրոնական բանկի որոշումն ստանալու պահից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն կանոնակարգի Հավելված 32-ով սահմանված ձևով կազմել և ապահովագրական գործակալին հանձնել հաշվառման վկայականը՝ Կենտրոնական բանկի որոշման մեջ նշված համարով:

247. Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված գործակալի հետ կնքած պայմանագիրը դադարեցնելու դեպքում ապահովագրական ընկերությունը գործակալին միջնորդների ռեգիստրից հանելու կամ ռեգիստրում փոփոխություն կատարելու միջնորդագրում ներկայացնում է գործակալի հետ կնքած գործակալի գործառույթներ իրականացնելու պայմանագիրը դադարեցնելու ամսաթիվը:»:

7) Կանոնակարգի գլուխ 39-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ գլուխ 39.1

«ԳԼՈՒԽ 39.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

248. Ապահովագրական ընկերությունը ապահովագրական գործակալի հաշվառումից հետո փոփոխություն տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փոփոխությունները՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար պատասխանատվության ապահովագրության պայմանագրում կատարված փոփոխությունները,
2) ապահովագրական ընկերության հետ կնքած գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի փոփոխված դրույթները,
3) իրավաբանական անձի ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձ աշխատակիցների կազմում կատարված փոփոխությունները,
4) ապահովագրական ընկերության հաստատված՝ գործակալի գործունեությանը վերաբերող ներքին կանոնակարգերի փոփոխված դրույթները:

249. Ապահովագրական գործակալի վերաբերյալ Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հրապարակված տվյալների, ինչպես նաև գործակալի հաշվառման վկայականում արտացոլված տվյալների փոփոխության դեպքում տվյալ ապահովագրական գործակալի հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը համապատասխան փոփոխությունը ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

250. Հաշվառման վկայականում փոփոխությունները կատարվում են ապահովագրական ընկերության կողմից սույն կանոնակարգի 249-րդ կետում նշված փոփոխություններ կատարելու մասին Կենտրոնական բանկի որոշումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, և հաշվառման վկայականի նոր օրինակը տրամադրվում է ապահովագրական գործակալին՝ հաշվառման վկայականի հին օրինակը ապահովագրական ընկերություն վերադարձնելու դեպքում:

250.1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված ապահովագրական գործակալն այլ ապահովագրական ընկերության հետ գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագիր կնքելու դեպքում (իրավաբանական անձ գործակալի դեպքում՝ գործակալի գործառույթների պատվիրակման թույլտվությունը ստանալուց հետո) տվյալ ապահովագրական ընկերությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում գործակալի տվյալների փոփոխության վերաբերյալ տեղեկացում՝ համաձայն Հավելված 11-ի և Հավելված 12-ի՝ կից ներկայացնելով՝

1) ապահովագրական ընկերության հետ կնքած պայմանագիրը,
2) սույն կանոնակարգի 225-րդ կետով սահմանված մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար կնքված պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը (եթե ապահովագրական ընկերությունը չի ստանձնում գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումը):

251.2. Ապահովագրական ընկերությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական գործակալին է տրամադրում Կենտրոնական բանկի սահմանած ձևով (համաձայն Հավելված 32-ի) իր անունից տրվող հաշվառման վկայականը՝ գործակալին ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու համար Կենտրոնական բանկի կողմից տրված հաշվառման համարով:»:

8) Կանոնակարգի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

9) Կանոնակարգի Հավելված 37-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

10) Կանոնակարգը Հավելված 39-ից հետո լրացնել Հավելված 40-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հաշվառված միջնորդները պարտավոր են բավարարել կանոնակարգի 229-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջներին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
25 հուլիսի 2018 թ., N 120-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 120-Ն որոշմամբ

«Հավելված 12
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման,
համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության ստուգման
և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ապահովագրական գործակալների վերաբերյալ

Ամրակցեք այստեղ անհատ ձեռնարկատեր գործակալի լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե ներկայացվում են միայն փոփոխությունները:
1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար միջնորդագիր ներկայացնող ապահովագրական ընկերության անվանումը
2. Ապահովագրական գործակալի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը կամ անուն, հայրանուն, ազգանունը ○ Իրավաբանական անձ գործակալի համար՝ Անվանումը՝ Կազմակերպաիրավական ձևը՝ ○ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ անուն, ազգանուն, հայրանուն
3. Ապահովագրական գործակալի վերաբերյալ տվյալներ
3.1. Իրավաբանական անձ գործակալի համար՝ Հարկ վճարողի հաշվառման համարը՝ Պետական գրանցման համարը՝ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ Հարկ վճարողի հաշվառման համարը՝ հանրային ծառայությունների համարանիշը՝ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը՝
3.2. Իրավաբանական անձ գործակալի համար՝ ○ Գործունեության տեսակը՝ _____ ○ Այլ գործունեությամբ չի զբաղվում Գործունեության իրականացման վայրը՝ Հեռախոսահամար՝ Անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝ ○ Գործունեության տեսակը՝ _____ ○ Այլ գործունեությամբ չի զբաղվում Հաշվառման վայր՝ Գործունեության իրականացման վայրը՝ Հեռախոսահամար՝
3.3. Իրավաբանական անձ գործակալի ղեկավար անձանց ցանկը

3.4. Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր գործակալի համար՝

Ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձ աշխատակցի (աշխատակիցների) տվյալները՝

Անուն, հայրանուն, ազգանուն	*Կրթություն*	*Աշխատանքային փորձ*

3.5. Իրավաբանական անձ գործակալի մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների ցանկը: *Սույն կետը լրացվում է, եթե իրավաբանական անձ գործակալը մտադիր է իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: Վերջիններիս բացակայության դեպքում կատարվում է «չունի մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ» նշումը:*

4. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը (որի հետ աշխատելու է գործակալը) ստանձնել է ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը:

- ○ Ոչ,
- ○ Այո, նշել պատասխանատվության չափը:

5. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող անձինք տիրապետում են սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության:

- ○ Ոչ,
- ○ Այո:

5.1. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող անձինք ունեն Ավտոապահովագրության միասնական պատուհան համակարգով աշխատելու հմտություն:

- ○ Ոչ,
- ○ Այո:

6. Արդյո՞ք առկա է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը:

- ○ Ոչ,
- ○ Այո:

7. Կից ներկայացնում ենք ապահովագրական գործակալի հետ կնքած պայմանագրի պատճենը (..էջ):

- ○ ապահովագրական ընկերության հետ կնքած գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը (..էջ)
- ○ ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը չստանձնելու դեպքում՝ մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար գործակալի կնքած պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը (..էջ)
- ○ գործունեության կանոնակարգերը, բացառությամբ եթե դրանք նախկինում արդեն իսկ ներկայացվել են Կենտրոնական բանկ (..էջ)
- ○ գործակալի վարքագծի պարտադիր պահանջները ներառող փաստաթղթի պատճենը (..էջ)

»:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 120-Ն որոշմամբ

«Հավելված 37
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման,
համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության ստուգման
և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման թեմաների ցանկը

1. Ապահովագրության հիմնական սկզբունքները, ապահովագրության հիմնական հասկացությունները
2. Ապահովագրության պայմանագրերի կնքման գործընթացը, ապահովագրության պայմանագրի կնքման միջնորդության նկատմամբ պահանջները
3. Ապահովագրության պայմանագրերը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը
4. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցման վճարման սկզբունքները, գործընթացը
5. Ապահովագրական գործակալի իրավունքները, պարտականությունները, ապահովագրական գործակալության պայմանագրի հիմնական դրույթները
6. Ապահովագրական միջնորդությունը, տեսակները
7. Ապահովագրական միջնորդային գործունեության կարգավորումը
8. Ապահովագրական գաղտնիքը
9. Ապահովագրության ձևերը, տեսակները, դասերը, դրանց բնույթը, առանձնահատկությունները
10. Ապահովագրության յուրաքանչյուր դասի գծով հաճախակի հանդիպող պայմանները, ներառյալ սահմանափակումները և բացառությունները, ապահովագրավճարի մեծության վրա ազդող հիմնական գործոնները
11. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
12. Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կանոններ
13. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
14. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
15. Ապահովագրական միջնորդների գործունեության, վարվելակերպի նկատմամբ պահանջները
16. Սպառողի հետ հաղորդակցման սկզբունքները, տեղեկատվության տրամադրումը
17. Ապահովագրական գործակալի գործարար վարվելակերպի կանոններ»:

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի հուլիսի 20-ի թիվ 120-Ն որոշմամբ

«Հավելված 40
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման,
համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության ստուգման
և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Ես (մենք)՝ ներքոստորագրյալ(ներ)ս _____

(անուն, հայրանուն, ազգանուն (անվանում))

պարտավորվում եմ (ենք) գործակալի գործառույթներ իրականացնելիս առաջնորդվել ապահովագրական գործակալի գործարար վարվելակերպի կանոններով (կցվում է).

Գիտակցում եմ (ենք), որ գործակալի գործարար վարվելակերպի որևէ կանոնների խախտում կամ բացթողում հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

___ _____ 20___ թ.

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ապահովագրական գործակալի գործարար վարվելակերպը ներառում է հետևյալ սկզբունքները՝
   1) Ազնվություն և վստահելիություն,
   2) Բարեխղճություն և անաչառություն,
   3) Արդարություն և հարգանք,
   4) Թափանցիկություն և պատշաճություն,
   5) Գաղտնիության ապահովում,
   6) Մասնագիտական համապատասխանություն (կոմպետենտություն),
   7) Բարի համբավ,
   8) Համագործակցություն:
2. Ապահովագրական գործակալի գործարար վարվելակերպի նվազագույն պահանջները վերաբերում են ինչպես ապահովագրական գործակալի և սպառողների հետ հարաբերություններին, այնպես էլ ապահովագրական գործակալի և ապահովագրական ընկերության հետ հարաբերություններին:
3. Ապահովագրական գործակալի գործարար վարվելակերպի պահանջները սահմանվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ով, Ապահովագրական ընկերությունների և ապահովագրական միջնորդների համար մշակված և վերջիններիս տրամադրված էթիկայի կանոններով, սույն կանոններով, ինչպես նաև ԱՊՊԱ պայ-

մանագրերի գծով միջնորդային գործունեություն իրականացնող գործակալների համար նաև՝ Հայաստանի Ավտոապահովագրողների բյուրոյի կանոններով:

4. Սույն կանոններով սահմանված սկզբունքների բավարարման համար ապահովագրական գործակալը պետք է՝

1) սպառողի նկատմամբ լինի քաղաքավարի, հարգալից և բարեկիրթ,
2) սպառողին հայտնի վերջինիս հետաքրքրող տեղեկատվություն՝ գործակալին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ապահովագրական ընկերության հետ կնքած ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրով նախատեսված իրավասությունների շրջանակներում,
3) սպառողի հետ հարաբերություններում լինի բացարձակապես անկեղծ ու ազնիվ,
4) ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ պահպանի կամավորության սկզբունքը,
5) խաբեությամբ չօգտագործի, չտնօրինի սպառողի գումարները,
6) սպառողից չթաքցնի էական տեղեկատվություն, որի արդյունքում սպառողը ձեռք կբերի իր պահանջմունքներին անհամապատասխան ապահովագրության պայմանագիր,
7) չմոլորեցնի չտեղեկացված, չկրթված, բավարար գիտելիքներ չունեցող, անիրազեկ սպառողներին,
8) սպառողի հետ հարաբերություններում լինի անկողմնակալ, արդար, անաչառ,
9) հաճախորդին չառաջարկի կամ չտա նվերներ կամ չմատուցի այնպիսի ծառայություններ, որոնք կարող են ազդել նրա որոշումների վրա,
10) չհուսահատեցնի սպառողին օգտվելու իր օրինական հատուցման իրավունքից կամ չհետաձգի հատուցման պահանջի ներկայացումը, եթե վերջինս իրականացվում է գործակալի միջոցով,
11) հաճախորդներին տեղեկացնի իրենց իրավունքների ու պարտականությունների մասին վեճերի ծագման դեպքում,
12) չանտեսի սպառողի իրավունքները կամ անօրինական, անբարեխիղճ կերպով չարաշահի,
13) անհապաղ անդրադառնա ապահովադիրների բողոքներին,
14) բարեխղճորեն և արդյունավետորեն մատուցի ծառայություն՝ բացառելով դժվարությունների, հետաձգումների առաջացումը,
15) սպառողից չստանա միջնորդավճար, դրամական պարգև, ինչպես նաև հաճախորդին չտրամադրի զեղչ,
16) պետք է գործի այնպես, որի արդյունքում չառաջանա շահերի բախում՝ իր և սպառողի, կամ իր և ապահովագրական ընկերության միջև: Շահերի բախումն առաջանում է, երբ սպառողի կամ ապահովագրական ընկերության նկատմամբ ապահովագրական գործակալի լոյալությունը փոփոխվում է վերջինիս անձնական շահերի ազդեցությամբ,
17) լինի թափանցիկ միջնորդավճարների մասով,
18) սպառողին նախապես տեղեկացնի ապահովագրության պայմանագրի վերակնքման մասին,
19) լինի բանիմաց, տեղեկացված ապահովագրական միջնորդություն իրականացնելու համար,
20) կատարելագործի իր գիտելիքները, հաճախորդին տրամադրի ստույգ տեղեկատվություն և վերջինիս հետ հարաբերություններում հանդես գա մասնագիտորեն,
21) տիրապետի ժամանակակից տեխնոլոգիաների՝ առցանց համակարգով աշխատելու համար,
22) անհապաղ արձագանքի սպառողի հեռախոսազանգերին, նամակներին կամ հաղորդակցման այլ ձևերին,
23) իրավասություններն ու պարտականությունները չլիազորի այլ անձի,
24) իր գործունեությամբ չվարկաբեկի և չհեղինակազրկի ապահովագրական ընկերությանը, որին ներկայացնում է:»:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2018)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 39

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 42

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 47

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 48

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 58

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 77

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
